# ԱՆՏԻԿ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՊԱՐԻԱԴՐԵՍ ԼԵՌՆ

ԱՐՄԵՆ ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ

*Անտիկ աղբյուրներում, մասնավորապես Ստրաբոնի «Աշխարհագրության» մեջ, բավականին տեղեկություններ են պահպանվել Պարիադրես լեռան մասին։ Սակայն դրանք չեն դարձել հատուկ ուշադրության առարկա և, հետևաբար, չեն ենթարկվել առանձին ուսումնասիրության։ Այդ իսկ պատճառով պատմագիտության մեջ տեղ է գտել և ընդհանրական դարձել այս թյուր կարծիքը, որի համաձայն Պարիադրեսը համապատասխանել է Պարխարյան լեռնաշղթային և նույնիսկ համընկել է անվամբ։ Իրանում որոշակի դեր է խաղացել նաև այն հանգամանքը, որ Պարիադրեսը իր հերթին հասադրվել և նույնացվել է Պարաքոաթրասի հետ[1], թեև դրանք ակնհայտորեն տարբեր լեռներ են։*

*Հույն աշխարհագրի տեղեկություններից մեկի համաձայն՝ տիբարեններով, խալդերով (իմա՝ խալդայներով) և ձաներով բնակեցված շրջանների (Փառնակիա—Տրապիզոն հատվածում) և Փոքր Հայքի «միջով անցնում է Սկյուդիսես ժայռոտ լեռնաշղթան, որ միանում է Մոսքիկյան լեռներին՝ Կողքիսի վերևում»։ Այս վկայությունից պարզորոշ երևում է, որ Արևելապոնտական լեռների հյուսիս-արևելյան հատվածը՝ Պարխարյան կամ Խաղտյաց լեռները (այժմյան Զիգանա, Տրապիզոնի և Լազիստանի լեռնաշղթաներ) ներկայացված է Սկյուդիսես[2] անունով և, հետևաբար, չեն կարող նույնանալ Պարիադրեսի հետ։*

---

1 Հ. Աճառյանը, հիմք ունենալով այդ տեսակետը, տեղանվան ստուգաբանության կապակցությամբ գրել է, որ Պարխար անունը ծագում է «Παρχοάρα։ Παρχαθρα։ իրանյան paruhvabra = = գնդ. pouruxvabra «լի բարօրությամբ» ձևից, որ Ավեստայում լեռներին տրված վերագիր է։ Սրանից առաջացել են սոգդ. Barxor «արբավայր, տաճար» և larxar, որ քնարական բանաստեղծության մեջ նշանակում է երջանկության վայր, անդորրության, հոսուն ջրերի և ըստվերների հավաքարան» (Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան. հ. 4. Երևան, 1978, էջ 62)։ Մեկ այլ առիթով անդրադառնալով նույն տեղանվանը՝ նա նշում է. «Պարիադրես (Παρχαδρης) կոչված է նաև Պարաքոաթրաս (Παραχοαθρας). Պարխարյան լեռնաշղթան է, որ ձգվում է Սև ծովի եզերքով... երկուսից առաջինը միևնույն բառի կապադովկիական ձևն է, երկրորդը՝ սարական։ Բոլորի մայրն է «գնդ. pouruxvabra = պհլ. parxvatih, որի բուն նշանակությունն է «բազմափայլ, շատ փայլ ունեցող» (Ստրաբոն, քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան (այսուհետև՝ Ստրաբոն). Երևան, 1940, ծան. էջ 118)։

2 Տե՛ս Ստրաբոն. էջ 43։

3 Նույն տեղում, էջ 73—75։

4 Սկյուդիսեսի բնակիչներին՝ սկյութեններին (ելնելով տեղանվան և վայրի նմանությունից), հիշատակել է Քսենոփոնը հունական զորքի նահանջի երթուղին նկարագրելիս (Անաբասիս. Երևան, 1976, էջ 103)։ Նրանց բնակության վայրը, դատելով «Անաբասիսի» տվյալներից, ոչ թե Կարս—Լենինական շրջանն է, ինչպես ենթադրել է Հ. Մանանդյանը (Երկեր. հ. 1. Երևան, 1977, էջ 78), այլ Հարպասոս գետի (Ճորոխ) վերնագավառը [Հայաստանը և Փոքր Ասիան ըստ Քսենոփոնի։ «Անաբասիս»-ի, քարտեզը. հեղինակ Ս. Տ. Երեմյան (տե՛ս Քսենոփոն. Անաբասիս Երևան, 1970, էջ 103)]։ Մեկ այլ առիթով թվարկելով Պարսից տերության կազմի մեջ մտնող այն ժողովուրդներին և ցեղերին, որոնց երկրների միջով անցել էր հունական զորքը, Քսենոփոնը «սկյութեններին» փոխարեն հիշատակել է «հեսպերիտներին» (նշվ. աշխ., էջ 197)։ Ուշագրավ է «հեսպերիտների» բնակության վայրը նույնպես տեղորոշվում է Ճորոխի հովտում, Բարձր Սայլ նահանգի Գպեր գավառի տարածքում՝ դավառանվան և ցեղանվան միջև գոյություն ունեցող հայտնի կապի պատճառով։ Այս ամենը վկայում է սկյութենների և հեսպերիտների նույնաց-*

որի մասին հատվածի շարունակության մեջ ասվում է՝ «Պարիադրես լեռ, որ Սիդենի և Թեմիսկյուրայի դաշտերից ձգվում է մինչև Փոքր Հայք և ձևացնում Պոնտոսի արևելյան կողը»[5]։ Այս դրվագում Պարիադրես է անվանված Սիդեն պոնտական գավառին և Թեմիսկյուրե հովտին (Իրիսի գետաբերանի շրջան)[6] անմիջականորեն սահմանակից Արևելապոնտական լեռների արևմտյան հատվածը (այժմյան Ջանիկ, Գիրեսուն և Գյումուշխանե լեռնաշղթաները), որը մի լեռնաբազուկով միանում է Անտիտավրոսին[7]։ Արևելքում նրա բնական շարունակությունն է կազմում այն լեռնաշղթան, որ ջրբաժանի դեր է կատարում Արևմտյան Եփրատ և Ճորոխ գետերի ավազանների միջև[8]։ Լեռնաշղթայի արևմտյան մասը նախաքրիստոնեական շրջանի հայերին հայտնի էր Անահտական անունով, Աթոռ Անահտա գլխավոր գագաթով (այժմ Քեշիշ դաղ կամ Սիպկոր դաղ, այսինքն՝ Սուրբ Գրիգորի լեռ)։ Արևելքում այս լեռները կոչվում են Կապույտ (Capotes. այժմ՝ Կոպ դաղ)[9]։ Այս լեռնաշղթայի ստուգավորումներից մեկը, Ստրաբոնի մեկ այլ հաղորդման համաձայն, եղել է Պարիադրեսը. «Եփրատից այն կողմ, Փոքր Հայքի մոտ, իբր շարունակություն Անտիտավրոսի, դեպի հյուսիս ձգվում է մի մեծ և բազմաճյուղ լեռնաշղթա, որանցից մինը կոչվում է Պարիադրես, մյուսը՝ Մոսքիկյան և մյուսն էլ ուրիշ անուններով»[10]։

Գլխավոր լեռնաշղթան, որի անունը այս դրվագում չի հիշատակվում, նույնպես կոչվել է Պարիադրես։ Այս կապակցությամբ կարևոր է դառնում Արտաշես I-ի (մ. թ. ա. 189—160 թթ.) կողմից դեպի հյուսիս կատարած արշավանքների ժամանակ Հայոց թագավորությանը վերամիավորած մարզերի մասին հաղորդումը. «[գրավեցին] վրացիներից՝ Պարիադրոս լեռան ստորոտի գավառները և Խորզենեն և Գուգարքը, որը Կուրի մյուս կողմն է»[11]։ Այս հաղորդումից կարելի է կռահել, որ թվարկված մարզերը հարել են միմյանց և նշված են որոշակի հաջորդականությամբ։ Եթե առաջնորդվենք այս նկատառումով և խնդրի լուծման հարցում դա ընդունենք որպես նախապայման և միաժամանակ ի նկատի ունենանք, որ հույն-հռոմեական աղբյուրների Գուգարքը [Գոգարենե] տարածվում էր Կուր գետից դեպի արևելք[12], ապա Խորզենեն բնականաբար, տեղադրվելու է Կուր գետից դեպի արևմուտք[13]։

---

սան մասին։ Հունական առասպելի համաձայն. Հեսպերիդները անձնավորում էին երկրի ծայրում երեկոյան աստղը, իր ուսերին պահող տիտան Ատլասի դուստրերին, որոնք հսկում էին այն այգին, որտեղ երկրի աստվածուհի Գեան աճեցրել էր ոսկե խնձորի ծառ, իբրև ընծա Հերա աստվածուհուն՝ Զևսի հետ ամուսնանալու հարսանիքի օրը (Ն. Կուն. Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները. Երևան. 1979. էջ 198—199)։

5 Ստրաբոն, էջ 75։

6 Տես Հայ ժողովրդի պատմություն. հ. 1, Երևան, 1971 (այսուհետև՝ ՀԺՊ), էջ 31։

7 Պարիադրեսի այդ հատվածը սխալմամբ համարվում է Սկիդիես (Սկյուդիսես) լեռնաշղթա (ՀԺՊ, էջ 14)։

8 ՀԺՊ, հ. 1, էջ 14։

9 ՀԺՊ, 1, էջ 14։

10 Ստրաբոն, էջ 43։ Ն. Ադոնցը այդ լեռները անվանել է Պարխարյան կամ Պարիադրեսյան նախալեռներ (Ն. Ադոնց. Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում. Երևան. 1987, էջ 76—78)։

11 Ստրաբոն, էջ 57։

12 Ս. Հարությունյան. Մեծ Հայքի Գուգարք աշխարհը ըստ «Աշխարհացույց»-ի.— «Բանբեր Երևանի համալսարանի» (ԲԵՀ), 1977, № 2, էջ 176։

13 Այդպես են վարվել Խորձենեի տեղադրությանը անդրադարձած բոլոր հետազոտողները [(Dr. J. Marquart. Eranšahr nach der Geographie des Ps. Movses Xorenaci. Berlin, 1901, S. 116; Հ. Հյուբշման. Հին Հայոց տեղվո անունները. Վիեննա, 1907, էջ 26, 236; Հ. Մանանդյան. Երկեր. հ. Ա., էջ 121; Г. А. Меликишвили. К истории древней Грузии. Тбилиси, 1959, с. 137; Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի. Երևան, 1963, էջ 67. Հայաստանի տերությունը Տիգրան Մեծի (95—55 թթ. մ. թ.

Նրա սահմանները կարելի է ավելի որոշակիացնել հայտնաբերելու համար այն տարածքը, որտեղ, հիշյալ տեղեկության համաձայն, գտնվել է Պարիադրես լեռը։ Հյուսիսում Խորզենեն պետք է տարածվեր մինչև Մեծ Հայքի սահմանագիծը կազմող Մոսքիկյան և Հայկական լեռները, որովհետև հակառակ դեպքում այն չէր կարող համարվել (ինչպես և Կամբյուսենեն) Հայաստանը ամենահյուսիսային մարզը[14]։ Հարավում նրա սահմանները հասնելու էին մինչև Կուրի ակունքների շրջանը, քանի որ այդտեղ է գտնվում «Խորձյան (Խորձիան) լեռը[15], տարավ-արևելքում՝ մինչև Բասեն[16], արևմուտքում՝ մինչև Ճորոխի ստորին հոսանքը։ Նշված սահմաններում Խորզենեն բավականին մեծ երկրամաս էր և գրավում էր դեռևս բևեռագիր արձանագրություններից հայտնի Խուշանի[17] և Կատարզա[18] ազգագավառների տարածքը և Մոսքիկեն ամբողջությամբ։

Խորզենեի սահմանների հարցում այս գրությունը արձանագրելու դեպքում հստակորեն ուրվագծվում է մեզ հետաքրքրող բնաշխարհագրական շրջանը։ Այն տարածքային առումով համապատասխանում է Աշխարհացույցի Տայք նահանգին[19]։ Այստեղ գտնվող նշանավոր գագաթը Ծաղկավետն է (3288 մ, այժմ՝ Դումլու դաղ)՝ Կապույտ և Տայքի լեռների միացման տեղում, որի անունով կոչվել է գլխավոր լեռնաշղթան։ Այս պարագայում Ծաղկավետը համապատասխանում է Պարիադրեսին։ Ծաղկավետ անունից դատելով կարելի է կռահել, որ նա այդպես է կոչվել վառ գույնի ծաղիկներով բազմախոտ մարգագետինների (ալպիական գորգեր) պատճառով, որոնք ծածկում են լեռնալանջերը և բնորոշ են ալպիական ու մերձալպիական գոտուն։ Եվ պատահական չէ, որ այդ բնաշխարհագրական շրջանի առանձին անկյուններ կոչվել

---

ա.) օրոք, քարտեզի հեղինակ Բ. Հ. Հարությունյան (տե՛ս Հայոց պատմություն, դասագիրք հանրակրթական դպրոցի 5—6-րդ դասարանցիների համար. Երևան, 1993)։

14. «Խորձյան և Կամբյուսենեն՝ Հայաստանի ամենահյուսիսային գավառներն են և շատ ձյունառատ, որովհետև մոտ են Կովկասյան լեռներին և Վրաստանին ու Կողքիսին» (Ստրաբոն, էջ 56—57)։

15. Ս. Տ. Երեմյան. նշվ. աշխ., էջ 56։

16. Հարկ է նշել, որ «հնագույն ժամանակներում Բասենն իր մեջ ընդգրկել է մի լայնածավալ տարածություն։ Նրա կազմի մեջ մտնում էր ոչ միայն «Աշխարհացույց»-ում նկարագրված Բասենը, այլև ամբողջ Վանանդ գավառը (Կարսի և Սարիղամիշի շրջանները), որ կոչվել է վերին Բասեն։ Հետագայում, ֆեոդալիզմի ձևավորման հետ միասին, այդ գավառը մասնատվել է երկու մասի՝ Բասենի և Վանանդի» (Թ. Խ. Հակոբյան. Հայաստանի պատմական աշխարհագրություն. Երևան, 1968, էջ 129)։

17. Տեղորոշվում է Զբլդր լճից հարավ-արևմուտք (Г. А. Меликишвили. Лиаухи.—ВДИ, 1950, № 4, с. 25, прим. 5 и с. 41. Նույնի. Урартские клинообразные надписи (այսուհետև՝ УКН). М., 1960, с. 429. Խուշանի անվան մեջ նշմարվում է Խորզենե (Խորձյան) երկրանվան հնագույն ձևը։ Այն իր հնչմամբ բավականին մոտ է սեպագրական շրջանից հայտնի Խուզանա քաղաքանվանը (УКН, 161, 398 և 399), որը պահպանվել է Խորձյան ձևով որպես գավառանուն Մեծ Հայքի Չորրորդ Հայք աշխարհում (Ս. Տ. Երեմյան. նշվ. աշխ., էջ 109) և կարող է լինել միևնույն տեղանվան տարբերակներցումը։ Անվանումների միջև կապը ակնհայտ է, թեև ժամանակագրական առումով հազիվ նկատելի։ Այն մատնանշում է ցեղային տեղաշարժի հետևանքով երկրանվան տեղափոխությունը։

18. Այդ անունը պահպանվել է Կղարշը (Կլարշենի) երկրանվան մեջ (УКН, էջ 114)։

19. Ս. Տ. Երեմյանի կարծիքով «Ստրաբոնի հիշատակած Պարիադրես (Պարխար) լեռների ստորոտը համապատասխանում է Գոդերձական գավառին, և երեք հիշյալ երկրամասերը, այսինքն, նաև Գոգարենեն ու Խորձենեն (Կղարշքը և Արդահանը), լինելով Հայաստանը ներառնող Աքեմենյան սատրապության մասեր, ողջ III դարի ընթացքում ընդգրկված են եղել Երվանդունիների պետության մեջ ու միայն դարավերջում են անցել Վրաստանին։ Այս դատողությամբ, Արտաշեսի կողմից նրանց նվաճումը պետք է դիտել որպես վերամիավորում» (ՀԺՊ, հ. 1. էջ 532)։

են Պարտեզ, որից և Պարտիզաց փոր գավառանունը[20], Մաղիկ, Վարդաշեն (վկայվել են Ի դարից)[21] և այլն։ Արշակունիների օրոք ծաղկավետ, անտառոտ, չրաշատ և որսաշատ Մաղկանց լեռները արքունի որսատեղի են եղել և ըստ այդ հատկանիշների ստացել են իրենց անունը[22]։ Այս բնութագրման հետ է կապված նաև Մաղկունյաց լեռների անվանումը։ Այդ տեղավայրերը իրենցից ներկայացնում են ընաշխարհիկ, յուրօրինակ պարտեզներ։

Սթե Պարիադրես լեռնանունը դիտենք որպես զնդ. Pairidaeza բառի (նշանակել է «շուրջանակի ցանկապատ»)[23] հնչյունափոփոխված զուգահեռ ձև, ապա տեղին է կարծել, թե Պարիադրես և Մաղկավետ տեղանունները համընկել են նաև իմաստային առումով, որովհետև այդ նախնական բառաձևից են ածանցվել հպլ. pardez, պրս. pales, հայ. պարտեզ («այգի, բանջարանոց, ծաղկանոց, մրգաստան»), արաբ. lirdaus («ծառաստան, պարտեզ, դրախտ»), լատ. paradisus («պարտեզ, երկրային կամ երկնային դրախտ») և այլ ձևերը[24]։ Հատկանշական է, որ հին աշխարհում մեծ հռչակ էին վայելում Աքեմենյան պարսիկ սեծատոհիկների պարտեզները։ Այդ օրինակով ստեղծված պարտեզների տարածումը դեպի արևմուտք պայմանավորել էր նաև բառի տեղափոխությունը[25]։ Շոշափվող խնդրի կապակցությամբ արժեքավոր է Գայոս Պլինիոս Սեկունդոսի հետևյալ հաղորդումը. «Իր ձախ կողմում (Մեծ Հայքը) լայնությամբ տարածվում է մինչև Կյուրոս գետ, անցնելով Արաքս գետից այն կողմ, իսկ իր երկարությամբ տարածվում է մինչև Փոքր Հայք (Armenia Minor), որից բաժանված է Եվքսինյան Պոնտոս թափվող Ափսարոս գետով և Ափսարոսին ծնունդ տվող Պարիադրյան լեռներով...»[26]։

Ափսարոսը Ճորոխն է կամ նրա ստորին հոսանքը[27]։ Գետը կազմավորող վտակների ակունքները գտնվում են Կապույտ կամ Մաղկավետ լեռների համակարգում, որոնք այդ պատճառով նույնանում են Պարիադրեսի հետ։ Սահմանագիծը Մեծ և Փոքր Հայքերի միջև նշված բնագծերով անցնելու դեպքում Ճորոխի վերին հոսանքի շրջանը (Աշխարհացույցի Սպեր գավառը) դառնում է Փոքր Հայքի մարզ։

Պատմական իրողություն է, որ դեռևս մ. թ. ա. 183—179 թթ. Մեծ Հայքին ու Սոփքին էին անցել Կարինը, Դերջանը, Անտիտավրոսի (Բարձր Հայքի լեռ-

---

20 Պարտիզաց փորը եղել է Աշխարհացույցի Տայք նահանգի գավառներից մեկը (տե՛ս Ս. Տ. Երեմյան. նշվ. աշխ., էջ 109)։

21 Ն. Ադոնց. նշվ. աշխ., էջ 43, ծան. 4։ Լեռնաշղթայի հարավային լեռնաբազուկնրում են Եփրատի ակունքները, որոնց ջրերը ոռոգում են Կարնո գաշտը։ Ուշադրության արժանի է Պարիադրեսի այդ հատվածի Խորենացու տված նկարագրությունը. «...այդ տեղը միջին դիրք ունի, ոչ շատ հեռու այն տեղերից, որտեղից բխում են Եփրատի մի քանի աղբյուրները և հանդարտ հոսանքով առաջ գնալով ծովանում, ճահճի տեսք ստանում։ Այստեղ անհաշիվ քանակությամբ ձկներ են լինում և զանազան տեսակ թռչուններ, որոնք սնվում էին այնտեղ, որոնց ձվերով միայն կերակրվում էին բնակիչները։ Եվ ճահճի ափին եղեգնուտներ՝ մեծ քանակությամբ եղեգով։ Դաշտերում բուսնում են բարձր խոտեր և առատաբեր սերմնատու բույսեր։ Լեռները լիքն են կճղակաբաշխ և որոճող երեներով։ Բազմությամբ աճում են այդտեղ ընտանի եղջերավոր անասուններ, հաղթահասակ, խոշոր, լիքը մարմնով և պարարտ» (Մովսես Խորենացի. Հայոց Պատմություն. Երևան, 1981, էջ 300)։

22 Մովսես Խորենացի. էջ 261։

23 Հր. Աճառյան. Հայերեն արմատական բառարան. հ. 5, Երևան, 1979, էջ 69։

24 Նույն տեղում, էջ 69—70։ Paruerdes ձևով տեղանունը նշված է մի քարտեզում (տե՛ս Торговые пути Юго-Кавказа в конце IV века по TABULA PENTINGERIANA и ANONIMUS RAFENNAT (по проф. Я. А. Манандяну и С. Т. Еремяну), составил С. Т. Еремян (на правах рукописи). Тифлис, 1934.

25 Նույն տեղում, էջ 69։

26 Plinii secundi C., Naturalis historiae, vol. 1—10, VI, 10, Cambridge, Mass.—London, 1950—1962 (Loeb. Classical Library). Հատվածի հայերեն թարգմանությունը տե՛ս ՀԺՊ. հ. 1, էջ 837։

27 ՀԺՊ, հ. 1, էջ 837, ծան. 69։

ներ)[28] ստորոտի հողերը և Եկեղիքը[29]։ Կարինը և Դերջանը միացվել էին Մեծ Հայքին, Անտիտավրոսի ստորոտի հողերը՝ Նոփքին, իսկ Եկեղիքը բաժանվել էր երկուսի միջև[30]։ Ս. թ. ա. 94 թ. Նոփքը միացվեց հայկական պետությանը։ Այդ գործողության հետևանքով Մեծ Հայքի թագավորության արևմտյան սահմանը դարձավ Անտիտավրոսի հյուսիս-արևելյան ճյուղավորությունը։ Մ. թ. ա. 66 թ. դրությամբ Մեծ Հայքի և Պոնտոսի թագավորություններն միջև սահմանագիծը (Մեծ Հայքի հյուսիս-արևմուտքում) անցնում էր Սինորա ամրոցի մոտով[31]։ Այս տեղորոշվում է Կապույտ կամ Նաղկավետ լեռներում գտնվող Բռնակապանի (այժմ՝ Փիրնեկապան) լեռնանցքի մոտ, որտեղով անցնում է Կարին—Տրապիզոն ճանապարհը[32]։ Անկասկած այդ հանգամանքն է նկատի առել Պլինիուսը նշելով, որ Մեծ Հայքը (Armenia Major) սկսվում է Պարիադրյան լեռներից (montes Paryadres)[33]։ Սինորայի աշխարհագրական դիրքը ցույց է տալիս, որ Ճորոխի վերին հոսանքի հովիտը պատկանել է Փոքր Հայքին։ Պոնտական տերության կազմում գտնվող այդ բնաաշխարհագրական շրջանի մասին Ստրաբոնը գրում է. «Պարիադրոսի ամբողջ այս լեռնոտ շրջանը հարմարավոր էր՝ լինելով ջրառատ, անտառաշատ և անդունդներով սեպացած ու վիհերով բաժանված ամեն կողմից. ուստի այնտեղ (Միհրդատը—Ա. Ղ.) կառուցեց մեծագույն մասն իր գանձատների, և վերջումն էլ Միհրդատը՝ Պոմպեոսի արշավանքին ապաստանեց այնտեղ, Պոնտական թագավորության այս ծայրամասը»[34]։

Բավականին հետաքրքիր է նաև Մեծ Հայքի արևմտյան սահմանի նկարագրությունը բովանդակող Ստրաբոնի հետևյալ հաղորդումը. «(«Հայասանի—Ա. Ղ.) արևմուտքից գտնվում են այս տիրարանի ժողովուրդը և Պարիադրես լեռը և Սկյուդիսես լեռը՝ մինչև Փոքր Հայք և Եփրատի հովիտը, որ բաժանում է Հայաստանը Կապադովկիայից և Կոմմագենից»[35]։ Տեղանվանական տվյալներից երևում է, որ Մեծ Հայքի արևմտյան սահմանը այս դեպքում անցել է միանգամայն այլ բնագծով՝ Արևելապոնտական լեռները Անտիտավրոսի հետ միացնող ջրբաժան լեռնաշղթայով, ապա, մինչև արևմտյան Եփրատի արմունկը՝ գետի թեքվելը դեպի հարավ[36]։ Այս նոր դրությունը, որ նկարագրված է Ստրաբոնի մոտ, պայմանավորված էր այդ ուղղությամբ Մեծ Հայքի թագավորության տարածքի ընդարձակման հետ։ Դրա հետևանքով հայկական պետության սահմաններում էր հայտնվել Ճորոխի վերին հոսանքի հովիտը՝ Աշխարհացույցի Սպեր գավառի տարածքը։ Դա տեղի է ունեցել մ. թ. ա. 66 թ. Տիգրան II-ի և Պոմպեոսի միջև կնքված դաշնագրի համաձայն[37]։

---

28 «Բարձր Հայքի լեռները զուգահեռ են Հայկական Տավրոսին, այդ պատճառով էլ հնում հայտնի էին նաև Անտիտավրոս անունով այնպես, ինչպես Կիլիկյան Տավրոսի դիմաց ընկած լեռնաշղթան թե՛ հնում, թե՛ այժմ կոչվում է Անտիտավրոս» (ՀԺՊ, 1, էջ 20)։

29 Նույն տեղում, էջ 543։

30 Նույն տեղում, էջ 600։ Եկեղիքը ընդգրկում էր Արևմտյան Եփրատի միջին հոսանքի հողերը։ Այն տարածքը, որ «հետագայում գրավում էին Ակիլիսենեն (Եկեղիք), Դարանալին Մանանալին, Աղյունը և Մուզուրը» (Ն. Ա գ ո ն ց. նշվ. աշխ., էջ 68)։

31 Ս. Տ. Ե ր ե մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 46։

32 ՀԺՊ, 1, էջ 14։

33 Նույն տեղում, էջ 837։

34 Ս տ ր ա բ ո ն, էջ 75,

35 Ս տ ր ա բ ո ն, էջ 53։

36 Միևնույն բնագծերով է անցել նաև Աշխարհացույցի Մեծ Հայքի արևմտյան սահմանը (Ն. Տ. Ե ր ե մ յ ա ն. նշվ. աշխ., տե՛ս քարտեզը)։

37 Հայաստանի տերությունը Տիգրան Մեծի (մ. թ. ա. 95—55 թթ.) օրոք, քարտեզի հեղինակ Բ. Հ. Հարությունյան։ Որոշ մասնագետներ գտնում են, որ այդ դաշնագրով Մեծ Հայքի թագավորության սահմանների մեջ ընդգրկված էր նաև Եկեղիքը (տե՛ս ՀԺՊ, հ. 1, էջ 600։ Հայկական պետությունը Տիգրան Մեծի ժամանակաշրջանում, քարտեզի հեղինակ Ս. Տ. Երեմյան)։

Ստրաբոնի՝ ուշադրության արժանի մեկ այլ հաղորդման համաձայն, Կովկասյան լեռնաշղթայից դեպի հարավ ձգվող լեռնաբազուկները, իրենց մեջ ներառնելով Վրաստանը, «միանում են Հայկական (Վերահայոց—Ա. Ղ.) և Մոսքիկյան կոչված լեռներին, ինչպես նաև Սկյութիսեսին և Պարիադրեսին»[38]։

Մեծ Հայքի հյուսիսում Պարիադրես են կոչվել Գուգարաց լեռները։ Դրա հաստատումը գտնում ենք Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրական ձեռնարկում», Ասիայի 3-րդ քարտեզում[39]։

Փոքր Կովկասի արտաքին շարի վերջին շղթան կազմող Արցախի (Դիզափայտի) լեռները հնում նույնպես հայտնի են եղել Պարիադրես անունով, որ ավելի նոր ժամանակներում հաղորդվել է Ղարաբաղ ձևով[40]։

Այսպիսով, ուսումնասիրությունից երևում է, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում նշված աղբյուրներում Պարիադրես անունով անվանվել են տարբեր լեռներ։ Ի դեպ՝ Ստրաբոնը Հայկական և Մոսքիկյան լեռները, Սկյութիսեսը և Պարիադրեսը համարում է Հայկական Տավրոս լեռնաշղթայի մասերը, որոնք «բաժանվելով այնտեղից դեպի հյուսիս են ձգվում և հասնում մինչև Կովկաս և մինչև Եվքսինյան ծովեզրը, որ ձգված է Կողքիսից Թեմիսկյուրե»[41]։ Ընդ որում, այդ լեռները «բռնում են ամբողջ Հայաստանը մինչև Վրաստան և Աղվանք»[42]։ Իսկ Մեծ Հայքը տարբեր ուղղություններով հատող լեռներից առանձնանում են Սկյութիսեսը, Հայկական և Մոսքիկյան, Հայկական Տավրոս և Զագրոս (Նաև. Կոհ-ի Նիհորական) լեռնաշղթաները, որոնք եզերում են Մեծ Հայքը հյուսիսից, հյուսիս-արևմուտքից, հարավից և հարավ-արևելքից, ինչպես նաև Բարձր Հայքի լեռները, այսպես բացահայտվում են այն լեռները, որոնք կոչվել են Պարիադրես։ Դրանք ծածկում են Մեծ Հայքի գրեթե ամբողջ տարածքը, որի բնաշխարհը ամբողջությամբ հիշեցնում է երկրավոր դրախտ՝ Պարտեզ[43]։

---

38 Ստրաբոն, էջ 27։

39 Կլավդիոս Պտղոմեոսի նկարագրության համաձայն Մեծ Հայքի Սիրակենե (Շիրակ) և Սակասենե (Շակաշեն) երկրամասերը գտնվել են Պարիադրես լեռան մոտ (Claudii Ptolemaei Geographiea. Parisiis, 1901, v. 12. 4): Այդ դրությունը կարող էր արձանագրվել միայն այն դեպքում, եթե նշված մարզերը սահմանակից են եղել, և Պարիադրեսը գրավել է միջանկյալ դիրք նրանց միջև։ Սրանից բխում է, որ Աշխարհացույցի Շիրակը և Շակաշենը, որոնք աշխարհագրականորեն գտնվել են միմյանցից բավականին հեռու, հնում ընդգրկել են ավելի մեծ տարածք։ Սիրակենեն հյուսիս-արևելքում, իսկ Սակասենեն հյուսիս-արևմուտքում տարածվել են մինչև Գուգարաց լեռները՝ միմյանցից բաժանվելով Հայար լեռան (3016 մ) միթիարի զանգվածով, որը և նույնանում է Պարիադրեսի հետ։ Այս եզրակացությունը մասամբ հաստատվում է Ստրաբոնի Շակաշենի տեղադրությամբ։ Այն զբաղեցրել է «Աշխարհացույցյան Ուտիք աշխարհի հյուսիս-արևմտյան մասը, տարածվելով մինչև Տրտու (ներկայումս Թարթառ) գետի ստորին հոսանքի հյուսիսակողմը (Բ. Հարությունյան. Արցախի, Հայոց Արևելից կողմերի և Ղարաբաղի տարածքի հարցի շուրջը.—ՊԲՀ, 1994, № 1—2, էջ 260)։ Հակառակ մոտեցման պարագայում՝ խնդրի լուծման ընդունելի տարբերակ պետք է համարել Սիրակենեի Σιρακηνή գրչագրումը Սիսակենե Σισακηνή, որի դեպքում Պարիադրեսը համընկնելու է Սևանա լեռնաշղթային (Բ. Հարությունյան. Նույն տեղում, էջ 205—206)։

40 «Այն ձևավորվել է պարսկական աշխարհագրական անվանումների հիման վրա. ի տարբերություն երկրամասի Բաղ-ի սաֆիդ (Սպիտակ այգի) կոչվող հարթավայրային մասի՝ լեռնային մասը սկսել է կոչվել Բաղ-ի սիահ, որ թուրքերին իմաստավորմամբ դարձել է Ղարաբաղ (Սև այգի)» (Нагорный Карабах. Историческая справка. Ереван, 1988, с. 8): Անհրաժեշտ է նշել, որ Արցախի մթին անտառներում աճող մեծ քանակությամբ վայրի պտղատու ծառերի և թփերի պատճառով երկրամասը ներկայանում է իբրև մեծ և գովասուն այգի, որով էլ պայմանավորված են երկրանվան առաջացման հետագա ձևերը։

41 Ստրաբոն, էջ 27։

42 Նույն տեղում, էջ 43։

43 Բառարան Սուրբ Գրոց. Կոստանդնուպոլիս, 1831, էջ 438։

## ГОРА ПАРИАДР АНТИЧНЫХ ИСТОЧНИКОВ

*АРМЕН КАРАГЕЗЯН*

Резюме

В античных источниках сохранилось достаточно сведений о горе Парнадр. В каждом конкретном случае этим именем названы различные горы. Однако эти сведения не стали предметом специального изучения и поэтому в исторической науке преобладает неверное представление, согласно которому гора Парнадр соответствует Пархарскому хребту. В статье указаны те горы, которые носили название Париадр.